

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքումյանի, Նաիրա Զոհրաբյանի, Լյովա Խաչատրյանի և Վահե Էնֆիաջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1053-06.09.2016-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Ներկայացված օրենքի նախագծով առաջարկվում է իրականացնել Գյումրի քաղաքում գրանցված և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը պետական աջակցություն՝ դրանով իսկ խթանելով նորաստեղծ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, ինովացիոն գործունեությանը, արտահանմանը, բնակարանային շինարարությանը: Մասնավորապես, նախա-

տեսվում է օրենքի նախագծով սահմանված ֆինանսական աջակցությունն իրականացնել պետական սուբսիդավորման, դրամաշնորհների տրամադրման, ծախսերի մասնակի փոխհատուցման ձևերով:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ՝

1. օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ օրենքի նախագծի նպատակը Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության աջակցության հիմնական ուղղությունները սահմանելն է, իսկ 2-րդ հոդվածում սահմանվում են այդ ուղղությունները, որոնք են՝ սորաստեղծ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, ինովացիոն գործունեության, արտահանման, բնակարանային շինարարության խթանումը: Հարկ է նկատի ունենալ այն, որ նշված ուղղություններով վարվող պետական քաղաքականությունը ներկայումս իրականացվում է համապատասխան ոլորտները կարգավորող գործող օրենքներով, մասնավորապես, «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին», «Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության մասին, «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աջակցության մասին» և մի շարք այլ կարգավորող օրենքներով, որոնցով սահմանվում են համապատասխան ոլորտներում պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ինովացիոն գործունեության տեսակները բազմաթիվ և բազմապիսի են, կլինեն տարբեր մեկնաբանություններ և կարծիքներ՝ ընկերության գործունեությունն ինովացիոն համարել, թե՛ ոչ:

2. օրենքի նախագծի 3-րդ հոդվածով ամրագրված են ձեռնարկատիրական գործունեությանը պետական աջակցության հիմնական ձևերը՝ ֆինանսական, ենթակառուց-

վածքային, տեղեկատվական և ինովացիոն, իսկ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում տրված է ձեռնարկատիրական գործունեությանը ֆինանսական աջակցության ձևերի բացվածքը, որից ակնհայտ է, որ օրենքի նախագծում շեշտը դրված է պետական աջակցության բյուջետային աջակցության ձևի վրա:

Բյուջետային աջակցության ձևերի նման մանրամասնեցված ամրագրումն օրենքով կանխորոշելու դեպքում էականորեն կնվազեցնի օրենքի նախագծի 1-ին հոդվածով սահմանվող օրենքի նպատակի իրագործման գործիքակազմի, մեխանիզմների ընտրության և կիրառման գործում Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների ճկունությունը.

3. օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի որոշ կետերով նախատեսվում է պետական սուբսիդավորում, ինչի հետ կապված անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ «սուբսիդիա» հասկացությունը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կազմը հաստատելու մասին» N 1937-Ն որոշմամբ հաստատված կարգով, որի համաձայն «Կարգի իմաստով սուբսիդիան՝ պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է: Սուբսիդիան ուղղված չէ կազմակերպության համար կապիտալ ակտիվների ձեռքբերմանն ու հիմնական ֆոնդերի կամ դրամագլխի ավելացմանը և կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունքում գոյացող եկամուտների հավելում է:»:

Տեղին է նշել, որ գործնականում անհնար է որոշել օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված պետական սուբսիդավորման չափը (շրջանառության հարկի, շահութահարկի, ավելացված արժեքի հարկի մասով):

Այսպես՝

1) նորաստեղծ, մինչև 3 աշխատող ունեցող և շրջանառության հարկ վճարող հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած հարկի չափով պետական սուբսիդավորման մասով հստակեցված չէ, թե ինչպես է իրականացվելու հարկի չափով սուբսիդավորումը՝ հաշվետու տարում աշխատողների թվի փոփոխությունների դեպքում.

2) անհասկանալի է, թե ինչպես է որոշվելու Գյումրի քաղաքում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների արտահանումից ստացվող շահույթից հաշվարկվող շահութահարկը, ինչպես նաև Գյումրի քաղաքի վարչական տարածքում իրականացված բնակարանային նշանակության օբյեկտների շինարարական աշխատանքների մասով ավելացված արժեքի հարկը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող շահութահարկը և ավելացված արժեքի հարկը հաշվարկվում են ոչ թե առանձին վայրերում իրականացվող գործունեությունից կամ առանձին գործառնություններից, այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող բոլոր գործունեության տեսակներից (գործառնություններից) ստացվող եկամուտների (հարկվող շրջանառությունների) և կատարված ծախսերի (ձեռքբերումների) հիման վրա:

Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ ֆինանսական աջակցության արդյունքում տրամադրվող դրամաշնորհների, սուբսիդիաների, ծախսերի փոխհատուցման դեպքերում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց մոտ կառաջանան լրացուցիչ հարկային պարտավորություններ («Շահութահարկի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 7-րդ հոդված և «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդված):

Կարծում ենք, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից իրականացվող գործունեության արդյունքում ստեղծվող նոր արդյունքից հարկերի տեսքով պետությանը հասանելիք մասը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելուց հետո կրկին տնտեսվարող սուբյեկտին վերադարձնելու՝ օրենքի նախագծով ներկայացված առաջարկությունը բավարար հիմնավորված չէ:

Բացի դրանից՝ կարծում ենք նաև, որ օրենքի նախագիծը պետք է վերաբերի բացառապես Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին:

Օրենքի նախագծի ընդունումը կառաջացնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի կատարման անհրաժեշտություն, որի չափը ներկայումս գնահատել հնարավոր չէ:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացրել, իրականացնում և առաջիկայում կշարունակի իրականացնել ձեռնարկատիրական գործունեությանը պետական աջակցության զանազան ծրագրեր, և, օրենքի նախագծով նախատեսվող հիմնական ուղղություններին համապատասխան, Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեությանը պետական աջակցությունը նույնպես պետք է իրականացվի այդ ծրագրերի շրջանակներում՝ բյուջետային հնարավորությունների սահմաններում՝ տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված չափերով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Հովհաննես Հովհաննիսյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին»
ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման
ազդեցության գնահատման**

«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵՁՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է կարգավորել Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին ուղղված պետական աջակցության ձևերն ու ուղղությունները, մասնավորապես՝ ինովացիոն գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների վարկային տոկոսադրույքների մինչև հիսուն տոկոսի, շրջանառության հարկի և շահութահարկի սուբսիդավորում, Գյումրի քաղաքում սոցիալական ծրագրեր իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին պետական դրամաշնորհների, լիզինգային ծախսերի մասնակի փոխհատուցման տրամադրում, ինչպես նաև արտահանվող ապրանքների արտահանման ռիսկերի պետական ապահովագրություն:

Նախագծով կարգավորվող շրջանակներն առնչվում են անշարժ գույքի, ինչպես նաև Գյումրի քաղաքում առևտրատնտեսական գործունեության շրջանակներում գործող որոշ շուկաների (ապրանքների, ծառայությունների և աշխատանքների) հետ: Նախագծի ընդունմամբ նշված շուկաներում մրցակցային դաշտի վրա կարող է ունենալ դրական և բացասական ազդեցություն:

Դրական ազդեցություն՝

Նախագծով առաջարկվող արտոնություններն ուղղված են Գյումրի քաղաքում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, արտահանող կազմակերպությունների, բնակարանային շինարարություն իրականացնող տնտեսվարողների կողմից իրականացվող գործունեության խթանմանը, ինչի արդյունքում կընդլայնվեն վերջիններիս հնարավորությունները կազմակերպելու իրենց սեփական արտադրական գործընթացը, ինչն էլ կարող է հանգեցնել նշված շուկաներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների քանակի ավելացմանը:

Բացասական ազդեցություն՝

Նախագծի ընդունման պարագայում, կցուցաբերվի տարբերակցված մոտեցում նշված արտոնություններից օգտվող սուբյեկտների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ տնտեսվարողների միջև՝ կարող են ձևավորվել անհավասար մրցակցային պայմաններ, ինչն էլ կարող է հանգեցնել նշված շուկաներում մատակարարների (տնտեսվարողների) միմյանց հետ մրցելու հնարավորությունների սահմանափակմանը:

Հիմք ընդունելով նախնական և ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլերի արդյունքները՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *դրական ազդեցություն հայտնաբերվելու* եզրակացություն՝ պայմանով, որ Նախագծով ներկայացված արտոնություններից կարող են օգտվել միայն Գյումրի քաղաքում առևտրատնտեսական գործունեություն իրականացնող փոքր ու միջին ձեռնարկությունները, մասնավորապես՝ նրանք, որոնց շրջանառությունը չի գերազանցում 115,0 մլն ՀՀ դրամը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագիծ՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է սահմանել Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության աջակցության հիմնական ուղղությունները, ձևերը:

Նախագծով ներկայացված ձեռնարկատիրական գործունեության ֆինանսական աջակցության գաղափարն՝ ուղղված ՓՄՁ-ների, արտահանող կազմակերպությունների, բնակարանային շինարարություն իրականացնող տնտեսավարողների կողմից իրականացվող գործունեության խթանմանը, ընդհանուր առմամբ, գործարար և ներդրումային միջավայրի վրա կարող է ունենալ դրական ազդեցություն: Միաժամանակ, առավել նպատակահարմար է Նախագծով սահմանվող դրույթները վերանայել ոչ միայն Գյումրի քաղաքի, այլ նաև տնտեսական զարգացման առումով Երևանին էապես զիջող մյուս բոլոր համայնքների համար:

Ձեռնարկատիրական գործունեության ֆինանսական աջակցության նպատակով որևէ տարածաշրջանի առանձնացումն, ինքնըստինքյան, կարող է խնդիրներ առաջացնել հավասար մրցակցային պայմաններ ապահովելու տեսանկյունից. Գյումրի քաղաքի վարչական սահմաններից դուրս ցանկացած այլ համայնքում գործող տնտեսավարող հայտնվելու է անհավասար մրցակցային պայմաններում՝ գործելով տնտեսական նույն կամ համանման միջավայրում:

Միևնույն ժամանակ, արտոնությունների տրամադրումը երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածում կարող է բացասաբար անդրադառնալ ընկերությունների մրցունակության խթանների բարելավման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյուղի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծի ընդունումը այլ հավասար պայմաններում կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման, որի չափը ներկայումս գնահատել հնարավոր չէ:

Նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի վրա կլինի չեզոք:

Պ-1053-06.09.2016-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Օրենքի նպատակը եւ կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակն է սահմանել Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության աջակցության հիմնական ուղղությունները:

2. Սույն օրենքը տարածվում է Գյումրի քաղաքում գրանցված եւ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների վրա:

3. Սույն օրենքը կարգավորում է Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին ուղղված պետական աջակցության հիմնական ձեւերն ու ուղղությունները:

Հոդված 2. Գյումրի քաղաքում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության հիմնական ուղղությունները

1. Ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցությունն իրականացվում է հետեւյալ հիմնական ուղղություններով.

- 1) նորաստեղծ փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացում,
- 2) ինովացիոն գործունեության խթանում,
- 3) արտահանման խթանում,
- 4) բնակարանային շինարարության խթանում:

Հոդված 3. Պետական աջակցության հիմնական ձեւերը

1. Ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցությունն իրականացվում է հետեւյալ հիմնական ձեւերով.

- 1) Ֆինանսական աջակցություն,
- 2) Ենթակառուցվածքային աջակցություն,
- 3) Տեղեկատվական եւ ինովացիոն աջակցություն:

2. Ենթակառուցվածքային, տեղեկատվական եւ ինովացիոն աջակցության կարգը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից սույն օրենքի գործողության մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

3. Ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցությունը կարող է իրականացվել ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ ձեւերով:

Հոդված 4. Ձեռնարկատիրական գործունեության ֆինանսական աջակցությունը

1. Ձեռնարկատիրական գործունեության ֆինանսական աջակցությունն իրականացվում է հետեւյալ ձեւերով.

- 1) ՀՀ պետական բյուջեից կառավարության կողմից սահմանված չափով եւ ձեւերով ինովացիոն գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների վարկային տոկոսադրույքների մինչեւ հիսուն տոկոսի չափով սուբսիդավորում,
- 2) ՀՀ կառավարության սահմանված կարգով պետական դրամաշնորհների տրամադրում Գյումրի քաղաքում սոցիալական ծրագրեր իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին,
- 3) Գյումրի քաղաքում գրանցված եւ գործունեություն իրականացնող նորաստեղծ, մինչեւ երեք աշխատող ունեցող եւ շրջանառության հարկով հարկվող տնտեսվարող սուբյեկտների՝ պետական բյուջե վճարած հարկի չափով պետական սուբսիդավորում,
- 4) Գյումրի քաղաքում գրանցված եւ գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների լիզինգային ծախսերի մասնակի փոխհատուցում ՀՀ կառավարության սահմանված չափով եւ ձեւերով,
- 5) Գյումրի քաղաքում գրանցված եւ գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների արտահանումից ստացված շահույթից հաշվարկվող եւ պետական բյուջե վճարվող շահութահարկի չափով պետական սուբսիդավորում:
- 6) Գյումրի քաղաքում գրանցված եւ գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից արտահանվող ապրանքների արտահանման ռիսկերի պետական ապահովագրություն՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով:
- 7) Գյումրու քաղաքապետի կողմից հաստատված ցանկում ընդգրկված՝ Գյումրի քաղաքի վարչական տարածքում իրականացված բնակարանային նշանակության օբյեկտների շինարարական աշխատանքներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին այդ մասով հաշվարկված եւ պետական բյուջե վճարած ավելացված արժեքի հարկի չափով պետական սուբսիդավորում:

2. Սույն հոդվածի առաջին մասի պահանջների իրագործումն ապահովող կառավարության համապատասխան կարգերը սահմանվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

Հոդված 5. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից:
2. Սույն օրենքը գործում է մինչեւ 2020 թվականի հունվարի 1-ը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Ելնելով Գյումրի քաղաքում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման եւ ձեռնարկատիրական գործունեության գործուն աջակցության անհրաժեշտությունից՝ առաջարկվում է մշակել Գյումրի քաղաքում տնտեսական ակտիվության բարձրացման, փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման, նորամուծական գործունեության, արտահանման խթանման, շինարարության իրականացման բարենպաստ պայմաններ:

Սույն օրենքի նախագիծը ներառում է ձեռնարկատիրության աջակցության ինչպես ֆինանսական, այնպես էլ ենթակառուցվածքային, տեղեկատվական եւ ինովացիոն ձեւերը: Ֆինանսական աջակցությունն ուղղված է հիմնականում փոքր եւ միջին ձեռնարկատիրության, արտահանող կազմակերպությունների, բնակարանային շինարարություն իրականացնող տնտեսվարողների կողմից իրականացվող գործունեության խթանմանը:

Սույն օրենքի նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք:

Սույն նախագծի մշակման գործընթացում ներգրավվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Միկրոէկոնոմիկայի եւ ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դասախոսներ տնտեսագիտության թեկնածու Արթուր Առաքելյանը եւ տնտեսագիտության թեկնածու Էմմա Մովսիսյանը: